

Քիւ 21911
Յուլիս 14, 1969

Համեստափայլ
Օրիորդ Սրբուհի Էսէֆեան
Ուաշինկթըն.

Սիրելի Օր. Ս. Էսէֆեան,

Բաւական ժամանակ առաջ մտադիր էինք Ձեզի գրելու քայց պարագաները թոյլ
չէին տար: Ուրախ ենք որ անհրաժեշտութեան մը ստիպողութեան պատճառաւ մեր
մտադրութիւնը կ'իրականացնենք Յետեւեալ խնդրանքը Ձեզի ներկայացնելով:

Յերփակ Ձեզի կը դրկենք Շահան Գերպէրեանի "Նումիասս Վարդապետ" գրքոյ-
կին հայերէն օրինակը եւ տարիներ առաջ Ձեր կատարած անգլերէն թարգմանու-
թիւնը:

Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը այս տարուան մշակութային ձեռնարկը
ձօնած է Նումիասս Վարդապետի ծննդեան հարիւրամեակին: Այս առթիւ հրատարա-
կելի գիրքին մէջ պիտի տպենք Շահան Գերպէրեանի գրութիւնը եւ նոյնին Ձեր
անգլերէն թարգմանութիւնը:

Շահան Գերպէրեան փոփոխութիւնները եւ յաւելումներ կատարած է Գուրբէշ
տպուած իր գրքոյկին մէջ, որուն վրայէն դուր կատարած էր անգլերէն թարգմա-
նութիւնը:

Կը խնդրենք որ ներփակ հայերէն սրբագրեալ օրինակին վրայէն վերահաւում-
ներ եւ մշտումներ կատարէք անգլերէն թարգմանութեան մէջ եւ փութով մեզի
վերադարձնէք:

Մտադիր ենք այս պատահութիւնը օգտագործել եւ սոյն գործը առանձնապէս եւս
տպագրել, այնպէս ինչպէս Շահան Գերպէրեան փափարած էր: Կողքի գծագրութիւնը
Օննիկ Աւետիսեան պատրաստած է, եւ երկու գոյնով պիտի ըլլայ:

Կը յուսանք որ ամառուան այս շաբաթները Ձեզի պատահութիւն պիտի տան այս
աշխատանքով զբաղելու: Ընորհակալ պիտի ըլլանք եթէ մինչեւ Օգոստոս 2, 1969,
կարենաք մեզի վերադարձնել ձեռագիրը: Մեզանքերին էջմիածին պիտի մեկնինք
եւ կարելոր է որ անկէ առաջ տպագրիչին յանձնած ըլլանք գրութիւնները:

Կը մաղթենք որ մաման միշտ վայելէ մարմինի եւ հոգիի առողջութիւն եւ դուր
պահէք Ձեր կորովը եւ նուիրումը, թանկագին Ձեր նպաստը բերելով համաձայն
Ձեզի պարգեւուած շնորհներուն:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐՔԵՐԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ